

Աղթամարի Զաքար տարկաւազէն ձեռք բերեր է հին գրչագիր Սւետարան մը, և հապոյտ Կողի Ս. Յակոբայ վանքին վերաբերեալ Աստուածաշնչի հաղորագրուած օրինակ մը և հին Սաղմոս մը ինչպէս նաև աւետարան մը ուրիշ տեղէ, և այդ գրչագրերն Սնդիկացի հնաստոյդի մը ծախել է: Խորհուրդը, նկատելով, որ ասիէ առաջ նմանօրինակ վաճառում մ'ալ Թերէպօլուի մէջ տեղի ունեցած և այս մասին հարևորը Ս. Պատրիարքին գրուած էր Խորհրդին կողմէ, այսպիսի թանկագին Սրբազան մատեաններու և առարկաներու յապահովի պահպանման մասին իր տեսութիւնները դժեց և որոշեց յայտադրել Ս. Պատրիարքին ի պարտուպատշաճ տնօրինութիւն:

Շատ զարմանալի է, որ վերոյիշեալ էֆէնդին, չնայած այդ ամօթալի խաչագողութիւններին, ազգային հաստատութիւնների մէջ պաշտօն էլ ունի, ինչպէս ինքը համեստութեամբ պարծենալով, անձամբ գրել էր № 9 «Մշակում» իր մի թղթակցութեան մէջ, Թէ «Պղտիկ ձայն մ'ալ ես ունիմ» երկու որբանոցներ յաշարումը» հոգաբարձութեան հաղմի մէջ: Յաւալի հաստատութիւն:



Տ Ե Ղ Ե Կ Ա. Գ Ի Ր

Տարւոյս ապրիլ 2 թուակիր պաշտօնական ծանուցման համեմատ բացուած քարոզի մրցման պայմանաժամ որոշուած էր հոկտեմբեր ամսոյ վերջը, և մինչև այնօր 35 ասարներ ծածկանուններու ներքև 56 գրուած քարոզներ հասան զանազան տեղերէ, որք և Յ. Ի. գրական յանձնաժողովոյ եկեղեցական անդամոց քննութեան ենթարկուեցան:

Հոկտեմբեր ամսոյն լրտնալէն վերջ Տիգրիսի աւագերէցներէն Տ. Արսէն աւագ քահանայ Բաղրատունիի կողմէն յղուած 77 քարոզներու ստուար հաւաքածոյ մըն ալ հասաւ, առանց որոշում ըլլալու մրցման մատուցուելիք քարոզը, և հեակարար ոչ միայն պայմանաժամին անցնելուն, այլ և այդ բազմաթիւ քարոզները միանգամայն մրցման ընդունելու անյարմարութեան առջև, մէկ կողմ թողուլ յարմարագոյն սեպուեցաւ:

Իսկ 56 քարոզները քննուեցան յանձնաժողովոյն նախագահ Սրբազան Պատրիարքին և Տ. Գէորգ եպիսկոպոս Նրիցեանի և Տ.

Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանի կողմէն, որք յանուանէ ալ նշանակուած էին մրցանակները վճարող բարերար անձին կողմէ։ Իսկ Տ. Նղիշէ եպիսկոպոս Գուրեան, թէպէտ հրաւիրուեցաւ, այլ Կալիկիանուց գործերու պատճառաւ արգիլուած լինելը հաղորդեց գրով։

Նրեք քննիչներն ի միասին գումարուելով, բարձրաձայն և ամբողջութեամբ կարգացին բոլոր քարոզները դեկտեմբեր 5, 6, 7 և 10 օրերուն մէջ և իրենց գնահատումը կազմելու համար, պաշտօնական ծանուցման դժած պայմաններուն հետ առանձին առանձին կշռադատութեան առին զրուած քարոզներուն վարդապետական, բարոյական և աստուածաշնչական պարունակութիւնները, նիւթին գիւտին կամ նորութեան և ընդլայնման կամ մշակութեան հանդամանքները, լեզուին յստակութիւնը և ոճին ազդեցութիւնը, և այդ կէտերէն իւրաքանչիւրին վրայ գնահատումնին մէկէն տասը թիւի վրայ նշանակելով՝ ամբողջութեան վրայ եզրակացութեան յանգեցան։

Ըստ պաշտօնական յայտարարութեան՝ պէտքէր որոշուէին մէկ 500 Ֆրանքնոց, երկու 200 Ֆրանքնոց, չորս 100 Ֆրանքնոց, չորս 50 Ֆրանքնոց և վեց դովուլթեան յիշատակի մրցանակներ։

Նրկու քարոզներ միայն ամեն կէտերու մէջ ըստ ամենայնի կատարեալ դատուելով, հաւասարապէս առաջին մրցանակի արժանաւոր գտնուեցան, և որովհետեւ ասոնցմէ ետքը եկող երկու քարոզներն ալ յոյժ մերձաւորութեամբ մրցանակի արժանի էին, յանձնաժողովս պատշաճազոյն դատեց առաջին մրցանակին առաջին երկուքներուն վրայ կիսել, իսկ երկրորդ մրցանակները վերջի երկուքներուն յատկացնել։

Ըստ այո՛ւ առաջին մրցանակի արժանի դատուած են Վերձանող անուամբ մատուցուած միակ և Ասեւ անուամբ մատուցուած առաջին քարոզները, իսկ երկրորդ մրցանակի արժանի դատուած են Արայեան Արայ անուամբ մատուցուած միակ և Նժդեհ անուամբ մատուցուած առաջին զոյգ քարոզները։

Նրբորդ մրցանակի արժանի դատուեցան Ասովիկ անուամբ մատուցուած առաջին, Շինական անուամբ մատուցուած երկրորդ, Գեղամ անուամբ մատուցուած միակ, և Սահառունի անուամբ մատուցուած երկրորդ՝ քարոզները։

Չորրորդ մրցանակի արժանի դատուեցան Յովնաթան անուամբ մատուցուած առաջին, Գիւս անուամբ մատուցուած միակ, Հրայեայ անուամբ մատուցուած երկրորդ և Մեղու անուամբ մատուցուած միակ՝ քարոզները։

Հինգերորդ կարգին, որ է լոկ դովուլթեան յիշատակ և տպագրութեան իբաւունք, արժանի դատուեցան նախ Ասեւ անուամբ

մատուցուած երկրորդ՝ և Նժդեհն անուամբ մատուցուած երկրորդ զոյգ քարոզներն, որոց հեղինակներն արդէն մրցանակ մը առած էին այլ գրուածոց արժանիքին համար. Յանձնաժողովը պատշաճ դատեց անոնց ալ հրատարակութիւնը. Իսկ վեցը, որք չորրորդ մրցանակի արժանացողներուն կը հետեւէին և նիւթերու ալ պէտքի-սութիւն կը ներկայէին և նախադասուելի դատուեցան՝ Էդան, Տուսեհորդի անուամբ մատուցուած երկրորդ, Կլայեցի անուամբ մատուցուած միակ. Մեսրոպ անուամբ մատուցուած առաջին, և Կամսարական. Մշակ հաւատոյ և Արքուն անուններով մատուցուած միակ քարոզները:

Այս կերպով մրցանակի և գովութեան արժանացած եղան 22 քարոզներ՝ փոխանակ 17-ի, իբր զի առաջին մրցանակը երկուքի վրայ կիսուեցաւ, և Նժդեհն անուամբ մատուցուած չորս քարոզները՝ իբր երկու հաշուեցան հեղինակին բացօրոշ փափագանաց համեմատ, և Ասիրի և Նժդեհի երկրորդներն ալ տպագրութեան ընդունուեցան:

Հետեւաբար այդ խումբէն դուրս մնացին 34 քարոզներ, որք մատուցուած են, Ասողիկ անուամբ—մի ևս, Նինական անուամբ—երկու ևս, Սահառունի անուամբ—երեք ևս, Յովնաբան անուամբ—երկու ևս, Հրաչեայ անուամբ—երկու ևս, Տուսեհորդի անուամբ—մի ևս, Մեսրոպ անուամբ—մի ևս, Հեփես, միւս Մելու, և Կրօնասէր անուններով միակ. Նեսեա անունով երկու, Աւեսարանիչ անունով երեք, միւս Դեղամ անունով երկու, Փառնակ Պանդուխտ Ղեւոնդ, Ալախոսիկ անուններով միակ. Շաւաբ անունով երկու, Մշակ, Գամեհ, Տրուպ, Արձանիկ և Գամալիկ անուններով միակ և վերջապէս մէկէ ալ 27113 թուահամարով:

Ծածկանունները բոլոր յատուկ պահարաններով անփոփոխած կը պահուէին, և միայն այդ ամեն որոշումներուն լրանալէն ետքը բացուեցան դեկտեմբեր 12-ին Յ. Ի. Գրական Յանձնաժողովոյ յատուկ գումարման մէջ:

Ի յայտ եկած արդիւնքը հետեւեալն եղաւ.

Վերծանող.	Բաբգէն վարդապետ	Կիւլէսէրեան, Կ. Պօլիս
Ասեր.	Մուշեղ »	Սէրովրեան, »
Արայեան Արա. Երուանդ »		Փէտտահճեան, Ամասիա
Նժդեհ.	Մաշտոց »	Փափաղեան, Կեսաբ
Ասողիկ.	Թորգոմ »	Դուչալեան, Արմաշ
Շինական.	Արիստակէս քահանայ	Տիւրկէրեան, Գանձալ (?)
Գեղամ.	Սահակ վարդապետ	Օտտապաշեան, Պօլիս
Սահարունի.	Խորէն քահանայ	Տալլեան, Սթանոշ
Յովնաթան.	Մեսրոպ »	Թորոսեան, Երզնկա
Գիւտ.	Մեսրոպ վարդապետ	Նարոյեան, Արմաշ

Մեղու. Վահրիճ » Շահլամեան, Ա. Պօլիս
 Տուաէորդի. Վարդան քահանայ Ասլանեան, Բեկեան
 Ալայեցի. Ներսէս վարդապետ Վանիէլեան, Ա. Պօլիս
 Մեսրոպ. Ղևոնդ » Գուրեան »
 Կամարական. Ներսէս քահանայ Տ. Կարապետեան, Բաղու
 Մշակ հաւատոյ. Վանիէլ վարդապետ Յակոբեան, Զմիւռնիա
 Արթուր. Կարապետ քահանայ Թուխմանեան, Կիտսոն
 Իսկ Հրաչեայ ծածկանունը անյայտ մնաց, որովհետեւ միայն
 «սրաշօճեայ Հայ եկեղեցւոյ Ա. Պօլիս» բացատրեալ գրուեցաւ կնքեալ
 ծրարին մէջ:

Մնացեալ 17 անուններէն՝ 12-ը վարդապետ են և 5-ը քահանայ,
 դարձեալ 12-ը գաւառներէն և 5-ը Պօլսէն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովոյ

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը, առաջիկայ 1905
 տարւոյ մրցանակին համար որոշեց 1901 Ապրիլ 28-ի հրահանգին և
 յօդուածոյն համեմատ ներկայանալի երկասիրութեանց նիւթին որո-
 շումն ինքն ընել, յուսալով այսու տեղի արդիւնաւոր ոճոյ մը նա-
 խափորան բրած լինել:

Որոշուած նիւթն է. Արդի Հայերէնի բառարանի համար նա-
 խապատրաստական նիւթերու հաւաքածոյ կազմել, իւրաքանչիւր
 բառի հանդէպ բառարանական ստորութեան տեղեկութիւններով,
 և մանաւանդ ծագման և կիրառութեան մասին բացատրութիւն-
 ներով:

Յանձնաժողովն ի նկատի առնելով նիւթին ընդարձակութիւնը,
 որոշեց ևս զայն երեքի բաժնել և իւրաքանչիւր մասին համար մըր-
 ցանակի բաժին մը յատկացնել: Երեք բաժիններն են.

Ա. Նոր շինուած կամ ճշտուած և նոր առում ստացած և հին
 հայերէնէ նորադիւտ բառեր և ոճեր:

Բ. Արեւմտեան գաւառաբարբառներու բառեր և ոճեր:

Գ. Արեւելեան գաւառաբարբառներու բառեր և ոճեր:

Վեներեալի Առանձն բառարանին վերջին տպագրութիւնը իբր
 հիմ ընդունուած է: Աշխատութիւնները նոր և ձեռագիր պիտի ըլ-
 րան և յստակ գրուած: Արդէն տպագրեալ աշխատութիւններ նոյ-
 նութեամբ չեն կրնար առաջարկուիլ, բայց եթէ նոր յաւելումներ